Ի՞նչ Պետք է Իմանան Միասեռական և Երկսեռական (Բիսեքսուալ) Տղամարդիկ Կապիկի Ծաղիկ Հիվանդության Մասին

Կապիկի Ծաղիկ

Հայտնաբերվել են դեպքեր միասեռական և երկսեռական (բիսեքսուալ) տղամարդկանց շրջանում, սակայն ոչ միայն

Ի՞նչ է Կապիկի Ծաղիկը

Կապիկի ծաղիկը վիրուսային վարակ է, որը փոխանցվում է սերտ անձնական շփման միջոցով, ներառյալ համբույրը, սեռական հարաբերությունը և մաշկը մաշկին այլ շփումներ: Ներկա բռնկման շրջանում մահացությունը գնահատվում է շատ ցածր:

Որո՞նք են ախտանիշները

Այլ Ախտանիշներ

ՑԱՆ, ԱՅՏՈՒՑԿԱՄ ԲՇՏԻԿՆԵՐ

Սրանք կարող են հայտնվել մարմնի ցանկացած մասում, ներառյալ սեռական օրգանները: Սա կարող է նման լինել սիֆիլիսին, հերպեսին կամ տարածված այլ մաշկային ցաներին:

Այլ Ախտանիշներ

Ջերմություն և Գլխացավեր

Մկանային ցավեր

Ավշային հանգույցների այտուց

Ախտանիշները հայտնվում են 5-21 օրվա ընթացքում

Ի՞նչ կարող եք անել

Եղեք տեղեկացված

Պահպանեք հանգստություն: Սա արագ փոփոխվող իրավիճակ է: Այցելեք CDC-ի կայքէջ՝ թարմացված ուղեցույցի համար:

Կապ

Եթե ունեք ախտանիշներ, զանգահարեք (մի՛ այցելեք) ձեր բուժաշխատողին և հարցրեք թեստավորման նմասին:

Մեկուսացեք

Եթե ունեք ախտանիշներ, մնացեք տանը, կրեք դիմակ և ծածկեք վնասվածքները՝ մյուսներին պաշտպանելու համար:

Թարմացվել է՝ 2022 թվականի հունիսին

ԴԱԴԱՐԵՑՐԵՔ ՍՏԻԳՄԱՆ

Յուրաքանչյուր ոք կարող է վարակվել Կապիկի Ծաղիկ հիվանդությունով

Միասեռականներին, երկսեռականներին (բիսեքսուալ) և տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող այլ տղամարդկանց մեղադրելը կարող է վնասել հանրային առողջության վարչության ջանքերը և պատճառ դառնալ, որ առողջապահական ծառայություններ տրամադրողները չնկատեն կապիկի ծաղիկ հիվանդությունը այլ համայնքներում:

Ծանոթացեք վերջին թարմացումներին և ձեռք բերեք ներբեռնվող թղթապանակները այստեղից՝

Gay Sexuality & Social Policy Initiative @ UCLA Luskin

gaysexresearch.com

California Department of PublicHealth

County of Los Angeles Public Health

GSSPI gaysexresearch.com

LOS ANGELES LGBT CENTER